վերանորոգութիւնների մտցնելը, որովհետև Անգլիայի բարեկամութիւնը չէ փախչում Թիւրքիան անգլիական պաշտպանողական կառավարութեան ժամանակն էլ յետաձգում էր վերանորոգութիւնների իրագործելը:

## ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾՈՎԱՅԻՆ ՑՈՅՑԸ Բ. ԴՐԱՆ ԴԷՄ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները:

Զանազան աղբիւրներից եկած, բայց միմեանց հետ բոլորովին համաձայն լուրերից տեղեկանում ենք, որ միջազգային ծովային ցոյցը Թիւրքիայի դէմ վերջնականապէս վճռւած է: Բեռլինի դաշնագիրը ստորագրող բոլոր մեծ պետութիւնները անհրաժեշտ են համարում այդ միջոցի գործադրելը, եթէ Բ. Դուռը հրաժարվի կատարել նրանց պահանջները Յունաստանի և Չեռնոգորիայի վերաբերութեամբ: Եթէ Կ. Պօլսից բացասական պատասխան տրվի ոչ թէ միայն պետութիւնների ընդհանուր գրութեանը, այլ մինչև անգամ նրանց պահանջին Չեռնոգորիային բաւականացնելու մասին, Թիւրքաց ջրերի մէջ անյապաղ կերևայ մի զինուորական նաւատորմ, որ կազմված կը լինի ռուսական, աւստրիական, ֆրանսիական, գերմանական, իտալական և անգլիական զինուորական նաւերից:

Դեռ ևս վճռւած չէ միայն այն հարցը, արդեօք պետութիւնները կը բաւականանա՞ն նաւեր ուղարկելով, թէ այդ նաւերի վրա զօրքեր էլ կը լինեն: «Հավասի» ընկերութեան տեղեկութիւնների համեմատ Անգլիան ցանկանում է նաւերի վրա զօրքերի ներկայութիւնը, Ռուսաստանը անպայման միացել է այդ ցանկութեան հետ, իսկ մնացած պետութիւնները, բացի Աւստրիայից, նոյնպէս համաձայն են միայն զանազան պայմաններով: Ինչ կը վերաբերի Աւստրիային, նա սկզբունքով համաձայն է, որ ծովային ցոյց լինի, հրաժարվելով զօրքեր տալ և պահանջելով, որ նաւատորմի մէջ իւրաքանչիւր պետութիւնից միայն երեք նաւ լինի:

Եթէ ճշմարիտ պետութիւնների մէջ համաձայնութիւն է կայացել ծովային ցոյցի մասին, պէտք է ենթադրել, որ նաւատորմը 18 նաւերից կազմված կը լինի, այսինքն իւրաքանչիւր պետութիւն միայն երեք նաւ կուղարկի: Այնուամենայնիւ նաւերի վրա կարող են և զօրքեր լինել: «Հավասի» ընկերութեան տեղեկութեան համեմատ Աւստրիան հրաժարվել է իր զօրքերը տալ, բայց միւս պետութիւնների զօրքերի ներկայութեան դէմ չէ բողոքել և որովհետև միջազգային ծովային ցոյցը ազդեցութիւն կունենայ միայն այն ժամանակ, երբ նաւերի վրա զօրքեր կը լինեն, որոնք հարկաւոր դէպքում կը կարողանան օգնութիւն հասցնել չեռնոգորցիներին և յոյներին, ուստի պէտք է կարծել, որ զօրքերի ներկայութիւնը նաւատորմի վրա նոյնպէս պէտք է վճռւած լինի:

Այս բոլորը կը մեկնվի ամենակարճ ժամանակամիջոցի մէջ: Եթէ միջազգային ծովային ցոյցը վճռւած է, հաշիւ չը կայ նրան յետաձգելու կամ ուշացնելու, որովհետև այդպիսի դանդաղութիւնը յոյս կը տայ Կ. Պօլսի կառավարութեանը խանգարել եւրոպական համաձայնութիւնը: Անգլիական լրագիրների հաղորդած լուրերից երևում է, որ Թիւրքաց կառավարութիւնը վերջին ժամանակներում մի քանի յուսահատ փորձեր է արել եւրոպական համաձայնութիւնը խանգարելու համար: Այդ նպատակով նա դիմել է գերմանական և ռուսաց կառավարութիւններին, նրանց զանազան խոստումներ անելով և թէպէտ պետութիւնները մերժել են Բ. Դրան առաջարկութիւնը, այնու ամենայնիւ Թիւրքաց կառավարութիւնը յոյս ունի հասնել իր նպատակին: Որքան կուշանայ միջազգային ծովային ցոյցը, այնքան Բ. Դրան մէջ կամրանայ ընդդիմադրութեան ոգին:

Կ. Պօլսից ստացված վերջին լուրերից երևում է, որ Բ. Դրան պատասխանը պետութիւնների ընդհանուր գրութեանը այնպէս է կազմված, որ տեղիք է տալիս նոր բանակցութիւններին Բեռլինի կօնֆերէնցիայի վճիռը փոփոխելու համար: Այդ փորձի առաջն առնելու համար ամենալաւ միջոցը ծովային ցոյցն է: Միջազգային նաւատորմը կարող է առաջ Թիւրքաց ջրերի մէջ երևալ և այնուհետև կանգնել Յունաստանի ափերի մօտ: Այդ միջոցով արևելեան վերջին հարցերը աւելի շուտ և խաղաղութեամբ կարելի է վճռել:

## ԲՕԼԳԱՐԻԱ

Սօֆիայից «Polit. Corresp.» լրագրին գրում են յուլիսի 15-ից:

Բօլգարական կառավարութիւնը գլխաւորապէս ուշադրութիւն է դարձնում զինուորական գործերի վրա: Այդ կողմից մանաւանդ նշանաւոր են զինուորական մինիստրի երկու կարգադրութիւնները: Ստրատեգիական մեծ նշանակութիւն ունեցող Իխտիման տեղի մօտ կազմվում է աշնանային բանակ: Այնտեղ կը հաւաքվեն ամեն տեսակ զօրքերի ներկայացուցիչները և զօրախաղեր կը կատարեն, որոնց ներկայ կը լինի բօլգարական իշխանը: Ասում են, որ այդ խաղերին ներկայ կը լինի մի ռուս օֆիցեր, որպէս զի կարողանայ գաղափար կազմել բօլգարական միլիցիայի առաջադիմութեան մասին: Զինուորական մինիստրի միւս կարգադրութեան համեմատ բօլգարական իշխանութեան հարաւ-արևելեան մասնում նշանաւոր զինուորական ոյժեր են հաւաքվում: Այստեղի մահմետական բնակիչները հաւատացնում են, որ այդ կարգադրութիւնը արված է այն պատճառով, որ Բօլգարիան դիտաւորութիւն ունի յարձակվել Արևելեան Ռումելիայի վրա: Երբ եւրոպական պետութիւնների ներկայացուցիչներից մէկը հարց է առաջարկել բօլգարական կառավարութեան զօրքերի այդպէս կենտրոնացնելու մասին, արտաքին գործերի մինիստրը պատասխանել է, որ բօլգարական զօրքերը Արևելեան Ռումելիայի զօրքերի հետ միացած մտադիր են զսպել աւազակների այն խումբերին, որոնք այդ երկու երկիրների սահմանների վրա ամեն տեսակ անկարգութիւններ են անում:

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 14 յուլիս 80

Յունաստանի դէմ պատերազմի պատրաստութիւններն կը տեսնուին, Մօնթէնեկրօյի դեսպանը ևս կը մեկնի Կ. Պօլսէն և քիչ ատենէն նորա հետ ալ պատերազմը կը սկսի: Ահա այս է Բ. Դրան պատասխանը եւրոպական ծանուցագրին: Հայոց համար ոչինչ կայ, քանի որ յեղափոխութեան երկիւղ չունի կառավարութիւնը և ոչ պատերազմի վտանգ առ ինչ Հայաստանի բարեկարգութիւններն փութացնէ: Բ. Դուռը արդէն Եւրոպիոյ դէմ հակառակ է և լաւ գիտէ թէ Հայաստանի համար մի քանի բարեկարգութիւններ ընելով Եւրոպայի հետ պիտի չը հաշտուի: Այսօր կը լսեմք թէ Վահան էֆէնդի Վանի կառավարիչ ընտրուեր է և այս լուրը բաւական ստոյգ կըսեն, և թէ Պատրիարքարանը դժկամակեր է այս ընտրութեան դէմ: Պատրիարքարանի դժկամակութեան պատճառը սա լինելու է, որ Վահան էֆէնդի իբր Հայաստանի կառավարիչ չընտրուիր, այլ գաւառի մը. իւր պաշտօնավարութեան ժամանակը երաշխաւորեալ չէ: Ինքն ապահովութիւն չունի որ Վանը գոհացուցիչ կառավարված ժամանակ Բ. Դրան կողմէ մեծամեծ դժուարութեանց չը պիտի հանդիպի, վերջապէս կը նկատուի թէ Բ. Դուռը այն ընթացքն պիտի բռնէ, որ ցոյց տայ թէ հայ կառավարիչ մը օգտակար չը կրնար լինել հայոց և նոցա դժգոհութիւն կը պատճառէ: Վահան էֆէնդի քաջ օրէնսգէտ մ'է, արդարութեան գործոց պաշտօնէի խորհրդական է և մեծ մտաւոր կարողութեան տէր է. սակայն բնաւ հայոց կողմէ համակրութիւն չէ վայելած, ընդհակառակն ամենքն զնա տաճկէ մը աւելի տաճիկ կը համարեն. գուցէ հասարակաց կարծիքն խաբուի, որովհետև չեմք լսած որ Վահան էֆէնդի ազգին վնաս մը հասուցած լինի: Աւստրիոյ կայսեր կամ Ֆրանսայի կայսրուհւոյն Կ. Պօլիս գալու ժամանակ հրաւէրի յապաղման խնդիր մը կայ, ահաւասիկ բոլորը այս է: Վահան էֆէնդի ազգային գործոց չէ միջամտած, ահա այս է իրեն դէմ եղած հակակրութեան պատճառը. բայց ինքն, երբ այս խնդրոյն վրայ իրեն հարցում ըրած են, կը պատասխանէ «Բ. Դրան հայ պաշտօնեայներն երբ ազգային գործոց մէջն են, զիրենք մատնիչ կը նկատէք, ձեր այս համոզումը որչափ իրաւացի լինելն չեմ ուզեր դատել, սակայն երբ ես իմ պաշտօնս և ազգիս շահերն իրարու համաձայն չը գտնելով, ազգային գործոց չեմ խառնուիր, որպէս զի ոև է դժգոհութեան տեղի չը տամ, կարծեմ թէ գոհ լինելու էք. ինչ կը պահանջէք միւսներէն, ոչ ապաքէն ազգային ասպարեզէն քաշուիլ»: Եթէ Վահան էֆէնդիի գործելու ազատութիւն տրուի, Վանայ համար շատ օգտակար կրնայ լինել: Բայց այսպիսի ընտրութիւնը հայկական խնդիրը չը վերջացներ. ոչ ոք գոհ է Բ. Դրան տուած պատասխանէն: Պ. Կօշէն մի քանի օր առաջ տեսակցութիւն մը ունեցաւ Պատրիարքի հետ և այս խնդրոյն մէջ նորա կարծիքներն լսեց և խոստացեր է որ հայոց փափագանաց համեմատ շարժին ըստ բաւականին. սակայն ուրիշներն կըսեն թէ Պատրիարքը Կօշէնի հետ ունեցած տեսակցութիւններէն գոհ չէ: Անձկանօք կը սպասէինք սրբազանի ճառին, զոր պիտի արտասանէր Ազգ. ժողովոյ բացման առթիւ և յոյս մը կը սպասէինք: Այդ բացումը մայիսի մէջ տեղի պիտի ունենար, բայց զանազան պատճառներով յետաձգուեցաւ: Մայիս 11-ին խուռն բազմութիւն մը մայր եկեղեցին դիմեց, բայց Պատրիարքը ներկայ չը գտնուեցաւ, նամակաւ մը Մատթէոս եպիսկոպոսի կը յանձնէ բացումը: Մեր փափագը գոհացնելու սա տողն միայն կը գրէ առ Մատթէոս եպիսկոպոս գրած նամակի մէջ. «Ժողովը բացէք և Աստուծոյ ողորմութենէն յուսահատ չը գտնուելնիս իմաց տուէք»: Եթէ գործերն այս վիճակի մէջ մնան ամենէն աղէկ միջոցն Աստուծմէ յոյս ունենալն է, ուրիշ բան չէ:—Դիւանագիտական աշխատութիւններն կը շարունակին, ամեն կերպով Թրքաց վիճակագրական մեծամեծ սխալներն ցոյց կը տրուին և Եւրոպիոյ թերթերն բաւական լաւ ուղղութեամբ կաշխատեն մտքերնին մշակել ի նպաստ հայոց, սակայն ինչ որ ալ ըլլայ Հայաստանի մէջ փոքրիկ շարժում մը դիւանագիտական միջոցներուն մեծ օգնական կրնար լինել, բայց ինչ օգուտ—Բողոք, բողոք, միշտ բողոք. ասկէ զատ ուրիշ զէնք չունինք. Ժողովոյ բացման օրն վանեցիք հանրագիր մը ներկայացնելով, Ազգ. ժողովոյ ուշադրութիւնը կը հրաւիրէր Վանայ մէջ ի գործ դրուած հարստահարութեանց վրայ. այս բողոքը թէպէտ գործնական արդիւնք մը չը պիտի կրնայ ունենալ, բայց պատասխան մ'է այն հեռագիրներուն, զոր կառավարութիւնը հրատարակել կուտայ Հայաստանի վիճակը խիստ գոհացուցիչ ցոյց տալով: Խրիմեան հեռագրով կը հաղորդէ թէ գոհ պիտի լինին եթէ սուլթանին կամեցած յանձնաժողովն ընտրուի Վանայ վիճակն քննելու համար: Վանայ մէջ քոմիսէրք բարեկարգութեանց յանձնաժողով մը ընտրած են, յորում 9 տաճիկ և 6 հայ, մէկ ասորի և մէկ հրէայ: Հայերն բողոքելով մեկնած են, վասն զի քանի որ հայք մեծամասնութիւն կը կազմեն, ինչպէս հնար է որ ժողովոյ մէջ փոքրամասնութիւն ունենան: Ատեն մը ձայն չէին հաներ, բայց ժամանակներն փոխուած են:

Ազգ. ժողովը իրեն ատենապետ ընտրեց Սերվիչէն էֆէնդի. բժիշկ է, տէրութեան գործոց մեծ հմտութիւն ունի, ընդհանուր յարգանք և համակրութիւն կը վայելէ, կտրուկ մարդ է և ժողովքը կառավարելու մեծ կարողութիւն ունի, Բ. ատենապետ ընտրուած է Մերէմ-Գուլի Յարութիւն:

Կարնոյ նախաթոռութեան խնդիրն չը կարգադրուեցաւ դեռ. Կարնոյ Մելքիսեդեկ եպիսկոպոսը կը պնդէ թէ ըստ տէրութեան օրինաց ինքն իբր հնագոյն նախաթոռ է. Պատրիարքարանը կը պատասխանէ թէ թէպէտ և կառավարութիւնը այդպիսի օրէնք մը հրատարակեց քանի մը տարի առաջ, բայց Պատրիարքարանը բողոքեց և անգործադրելի մնաց: «Մասիս» այս նիւթին վրայ յօդուած մը կը գրէ, յորում կամբաստանէ Թէրճեմանը-էֆքեարը իբր կողմնակից հռովմէական հայոց. այս յարձակումը անիրաւ է. իբր անկողմնակալ թերթ մը Թէրճեմանը-էֆքեար թէ հռովմէական հայոց և թէ մեր առարկութիւններն կը հրատարակէ առանց մեկնութեանց. միթէ յանցաւոր է նա, որովհետև խնդրոյն բոլոր կէտերն կը լուսաբանէ. Թէրճեմանը Էֆքեար ազգային բարձրագոյն խնդրոց մէջ ազգային դատը արիաբար պաշտպանեց, իւր խմբագիրներն բանտարկվեցան, թերթը քանիցս գոցուեցաւ, ջնջվեցաւ, և նիւթապէս մեծամեծ հարուածներ կրեց կառավարութիւնէն, իբր հայոց յեղափոխական օրգանը և այդ միջոցին ինչու «Մասիս» չէր հրատարակեր թէ Թէրճեմանը էֆքեար «Հայութեան դիմակի ներքև երևնալով, ինքզինքն իբր ճշմարիտ հայ ցուցնելով և պարզամիտ հայոց ստակովն ապրելով, հայոց ազգին զգացմունքը կը վիրաւորէ»: կարծեմք թէ մեր թերթերն քիչ մը աւելի ազնուութիւն ունենալու են:

Հայոց վիճակագրութեան մասին առանց երկար գրելու կը խրկեմք այս խնդրոյն վրայ եղած մի քանի հրատարակութիւններ: Ասոնց մէջն է Թէրճեմանի Էֆքեարի հրատարակած նշանաւոր անձի մը մէկ վիճակագիրը, ասոր մէջը կը տեսնուի որ իսլամացեալ հայերն ալ իբր հայ՝ հայոց գլխոյն մէջ մտած են, և այս ալ խելացիութիւն է: Երբ ատեն մը «Մշակ» մահմետական հայերն հնարեց, շատ դէմ խօսեցան. մեք չենք ուզեր գրել թէ մահմետական հայերն մինչև որ աստիճան հայ համարելու ենք, բայց քաղաքական օգուտներն մտածելն լաւ կը լինի: Հայաստանի մէջ կամ կրօնքը ազգութեան հիմ բռնելու ենք, կամ ցեղը. առանց իմաստասիրական խորհրդածութեանց, կարծեմք պարագայից համեմատ շարժիլն աւելի օգտակարն է: Արդ այսօր ցեղն ազգութեանց հիմ բռնելով հայոց թիւն մօտ մէկ միլիոն կը բազմանայ և հայերն այսու բազմաթիւ կը լինին. Եւրոպայ, որ այսօր կրօնքով չէ որ ազգերն կը ճանչէ, այլ հրէայ, բողոքական, քաթօլիկ Գաղղիացի, Անգլիացի Գերմանացի կան, չը պիտի կրնայ մեզ առարկել թէ «իրաւունք չունիմք հայոց թուահամարը ըրած ժամանակիս ցեղը մեզ հիմ ունենալ. մանաւանդ թէ երբ տեսնեն որ կրօնական նախապաշարմամբք այսպիսի մեծ աւելորդութիւն մը ձեռքէ կը հանեմք, բաւական տխուր գաղափար մը պիտի ունենան թէ մեր քաղաքագիտական տաղանդի վրայ և թէ մեր ազատամտութեան վրայ. այսու հանդերձ մեք դարձեալ կը գոչեմք «կորչի աշխարհ քան թէ մի սկզբունք»:

Հայկակ

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 24 յուլիսի: Ընդհանուր խորհուրդների անդամների վերջնական ընտրութիւնները, բացի Կորսիկայից, այս հետևանքները ունեցան. ընտրված են 902 հանրապետականներ և 372 պահպանողականներ:

ԼՕՆԴՕՆ, 24 յուլիսի: Պարլամենտի մէջ տրվեցաւ 282 ձայներ 50 դէմ. հարցը նորից ծագեցրած էր իրլանդական հողերի կալուածների վարձատրութեան մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 92 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր.50 կ., երկրորդ 222 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր., 25 կ., երկրորդ 90 ր., 77 կ., ոսկի 7 ր. 87 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24, 91 պէնս, ռուսաց 100 ր. Բեռլինի վրա արժէ 126 մարկ 25 պֆ., Համբուրգի վրա 212 մարկ. 50 պֆ. Փարիզի վրա 263 ֆրանկ. 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խնդրում ենք մեր այս տարվայ բաժանորդներին, որոնք դեռ ևս «Մշակի» տարեկան վճարը հասցրած չեն խմբագրութեանը, շուտով ուղարկել մեզ իրանց վրա մնացած պարտքը:

Բոլոր թէ նամակները, թէ թղթակցութիւնները և թէ փողերը պէտք է ուղարկվին անմիջապէս խմբագրութեանը հետևեալ հասցէով. Въ Тифлисъ, Въ Редакцію газ. «Мшакъ.»

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ